

## ՀՅ ԳԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ 1918–1920 ԹԹ. ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՎԱՎԵՐԱԳՐԵՐԸ

Մաս վեցերորդ: Գեներալ Ղամազովի սպանության և այլ հարցերի քննությունը ՀՅԴ Գերագույն դատական ատյանում\*

**Շարունակելով 1919 թվականի նոյեմբերից իր գործունեությունը ծավալած ՀՅԴ Գերագույն դատական ատյանի նիստերի արձանագրությունների հրապարակումը՝ ներկայացնում ենք գեներալ Ղամազովի սպանության և Տիգրան Դևոյանի ու Ալեքսանդր Շարաֆյանի գործունեության քննությանը միտված նյութերը:**

Ներկա հրապարակման առանցքային թեման Հայաստանի առաջին Հանրապետության զինվորական գործիչներից գեներալ Ղամազովի (Ղամազյան, Համասյան) սպանության դիպվածն է: Ղամազովը ցարական, ապա Ա. Դենիկինի Կամավորական բանակի սպա էր, ով զինվորական ծառայության էր անցել Առաջին Հանրապետության բանակում:

Նորաստեղծ պետականության պայմաններում, երբ զինված ուժերի ձևավորումը դեռևս իր վերջնական ավարտին չէր հասցվել, բանակաշինության ոլորտում նախկին ցարական բանակի հայազգի զինվորականների ներգրավումն անհրաժեշտություն էր: Սակայն Առաջին Հանրապետության ռազմաքաղաքական պատասխանատուները քաջ գիտակցում էին, որ այդ սպաները իրենց դաստիարակությամբ և անցած ուղով կապված են նախկին ցարական բանակին, և երագում են բոլշևիկների դեմ պայքարող նրա բեկորների միջոցով նախկին իշխանության վերականգնման մասին: Անշուշտ, այդ ամենը բացասաբար էր ազդում հատկապես բանակում տիրող բարոյահոգեբանական մթնոլորտի առողջացման և զինված ուժերի հայացման գործընթացի վրա:

Ավելին, առկա էր նաև տեղեկատվության արտահոսքի վտանգ, ինչը լրջագույն սպառնալիք էր պետական անվտանգության համար: Մեր կարծիքով, հենց այս տեսանկյունից պետք է դիտարկել գեներալ Ղամազովի սպանությունը: Մի խումբ հայրենասեր գործիչներ, առանց պետական կամ կուսակցական վերադաս մարմինների ինստիտուցիոնալ թույլտվության (ինչն ապացուցվեց Գերագույն դատական ատյանի քննությամբ),

\*Ընդունվել է տպագրության 3.03.2014:

Հ. ԺԳՆ ԳՐԱԳԻՐ, ԹԻՎ 1 (45) ԽՈՒՄԻՆԱԿԱՆ ԿԱՆՈՒՄ, 2014 ՎԵՐ ԱՍՏՄԱՆԱԿԱԿԱՆ ԿԱՆՈՒՄ

սեփական նախաձեռնությամբ հապշտապ որոշում են կայացնում կանխել Առաջին Հանրապետության բանակի ռազմական գաղտնիքների արտահոսքը: Արդյունքում՝ տեղի ունեցած ընդհարման ժամանակ դիմադրություն ցույց տված Ղամազովը վիրավորվում և ապա մահանում է:

Նույնատիպ, բայց ավելի հին պատմություն ունեցող կասկածների ու ամբաստանության արդյունք էր նախկին ցարական բանակի սպա Տիգրան Դևոյանի՝ 1915 թվականի գործունեության դրվագների քննությունը ՀՅԴ Գերագույն դատական ատյանում: Իսկ ինչ վերաբերում է Ալեքսանդր Շարաֆյանի հասցեին ուղղված նյութական բնույթի ամբաստանություններին, ապա տեղի ունեցած մանրակրկիտ քննության արդյունքում դրանք այդպես էլ չհաստատվեցին:

Հրապարակվող փաստաթղթերը ևս մեկ անգամ ապացուցում են ՀՅԴ Գերագույն դատական ատյանի գործունեության անաչառությունը և կուսակցության անունի ու վարկի պահպանման հարցում դրսևորած հետևողականությունը:

Ընթերցողի ուշադրությանը ներկայացվող արձանագրությունները պահվում են Հայաստանի ազգային արխիվի Հայ Յեղափոխական Դաշնակցություն կուսակցության ֆոնդում (Ֆ. 1457): Ընդգծումները բնագրինն են: Անհրաժեշտության դեպքում կատարվել են ուղղագրական և կետադրական շտկումներ: Խմբագրական հավելումները տրվել են ուղղաձիգ [ ] փակագծերում:

Ավագ Ա. Հարությունյան  
*Պատմ. գիյ. թեկնածու*

## **DOCUMENTS OF AR FEDERATION'S HISTORY OF 1918-1920**

Part six: Supreme Court session protocols concerning the assassination of General Ghamazov and related cases

Avag A. Harutyunyan

## **ДОКУМЕНТЫ ИЗ ИСТОРИИ АРФ ДАШНАКЦУТЮН 1918–1920 гг.**

Часть шестая: Протоколы Верховного суда АРФД, касающиеся убийства генерала Гамазова и сопутствующих дел

Аваг А. Арутюнян

Նիստ Լ.

21 Յունվ[ար]. 1920

Ներկայ էին՝

Ընկերներ՝ Յովսէփ Տէր-Դաթեան, Լևոն Թադէոսեան, Մերուժան Օգանեան:  
Օրակարգ՝

1. Միշա Արզումանեանի Դատական Ատեանիս գրած նամակը՝ գեւ. [երալ] Ղա-  
մագովի սպանութեան առթիւ:

Լուծում

1. Գեներալ Ղամագովի սպանութեան հարցը Դատական Ատեանի գրադման  
առարկան լինելուն<sup>1</sup>. Միշա Արզումանեան այդ առթիւ գրած էր Դատական Ատեա-  
նիս ռուսերեն լեզուով նամակ մը, որուն ամփոփումը հետևեալն է.

«26-ի թէ 27-ի գիշերը, հոկտ. [տմբեր] ամսոյս, Երևանի քլիպին<sup>2</sup> մէջ ինձ  
մօտեցաւ Մուրադեանը<sup>3</sup> և ըսաւ, թէ այս առաւօտ ժամը 7-ին կը մեկնի գեներալ  
Ղամագով՝ իր հետ տանելով կամաւորական բանակին<sup>4</sup> համար զինուորական  
շատ կարևոր փաստաթղթեր: Մենք մօտեցանք այն սեղանին, ուր նստած էին  
Շահխաթունի<sup>5</sup>, կապիտան Տէր-Օհանեան և Լևոն Քալանթարեան<sup>6</sup>:

Կապիտան Մուրադեան անոնց ալ պատմեց ինչ որ ինձ ըսած էր և բոլորս ալ  
այն կարծիքին եկանք, թէ այդ փաստաթղթերը պէտք է անկէ խլել Սանահինի  
ճամբուն վրայ կամ մի այլ տեղ: Պէտք է խուզարկել ոչ միայն իր իրերը, այլև զին-  
քը, որովհետև կրնայ պատահել, որ պահած ըլլայ գանոնք իր քով:

Գործը ինչպէս գլուխ հանելու մասին սկսանք մտածել: Շահխաթունեան կ'ա-  
ռաջարկէ իր ծառայութիւնը՝ ըսելով, թէ ես մի քանի անգամ փորձուած եմ այդպիսի  
գործերու մէջ, ինչպէս Մակուայ խանի գործին մէջ էր: Ես ըսի, որ Շահխաթունեան  
անյարմար է, քանի որ պաշտօնական անձնաւորութիւն է: Յետոյ Լևոն Քալանթար  
իր ծառայութիւնը առաջարկեց: Ես ըսի անոր, որ արդէն ինք մինիստրութեան  
կողմէ առանձին ատրիատի<sup>7</sup> գործը իր վրայ վերցուցած է և մեծ [սպեալ] անյարմար  
է այս գործին մէջ ալ նետուիլ: Եւ անոնց հակաձառելով ըսի, որ գործը կարելի է  
յանձնել կապիտան Կասումեանին, որ պետական ծառայութեան մէջ չէր: Բոլորը  
համաձայնեցան:

10 վայրկեան յետոյ ես տեսայ կապիտան Կասումեանին, որը տուաւ իր հա-  
մաձայնութիւնը: Ես ինքս անոր խորհուրդներ տուի ըսելով, որ այդ գործը ի գլուխ  
կարելի է հանել կամ Ալէքսանդրապոլ կամ մի ուրիշ տեղ: Միւս ընկերներու

1 Այսպէս է թնագրում:

2 Ակումբ:

3 Հայաստանի առաջին Հանրապետության բանակի հետախուզական բաժնի պետ:

4 Նկատի ունի գեներալ Ա. Դենիկինի գլխավորած ռուսական սպիտակգվարդիականների  
բանակը, որը մինչ այդ՝ 1919 թ. հունվարի 8-ին մտել էր նույն Ա. Դենիկինի կողմից հա-  
մախմբված Ռուսաստանի Հարավի զինված ուժերի կազմի մեջ՝ դառնալով նրա հիմնական  
հարվածային խմբավորումը:

5 Արշալույս Շահխաթունին Երևանի պարետն էր:

6 Լևոն Քալանթարյան (1879-1964): Ծնվել է Զաքաթալայում: Պատանի հասակից հարել է  
ՀՅ Դաշնակցությանը: Գործել է Բաքվում, մասնակցել ռումբերի պատրաստմանը: 1904 թ.  
մեկնել է Կարս և միացել Թորգոմի «Որսկան» խմբին: Հետո գբաղվել է դեպի Երկիր գենքի  
փոխադրմամբ: 1918 թ. եղել է Բաքվի ինքնապաշտպանության գենքի և զինուժի մատա-  
կարարաման պատասխանատուներից: Հայաստանի առաջին Հանրապետության օրոք եղել  
է Գաղտնի ոստիկանության պետ: Մահացել է Իրանում:

7 Ջոկատ – ռուսերեն:

2 (ԺԲ) քաթի, թիվ 1 (45) հունվար-մարտ, 2014

ՎԷՆ համահայկական հանդես

պահանջով ըսի, որ ես գործը կարգադրեցի: Կապիտան Մուրադեան այնուհետև կը հասկնայ, որ Ղամազեան օթոնոպիլով պիտի երթայ:

Առտուան կանուխ գացի Կասումեանի քով, սա ինձ յայտնեց, որ մինչև վակ-գալ<sup>8</sup> հասնելը մենք որոշած ենք զայն կողոպտել:

Ես ինքս այնուհետև գացի վակգալ, նամակս յանձնեցի: Երկաթուղին 10 րոպէէն պիտի ելլեր, և սակայն ոչ ոք, ոչ ալ Ղամազով՝ չեկան: Ես այն ատեն վերցրի կառքը և սկսայ քաղաք երթալ:

Ճանապարհին տեսայ մի ֆայթոն<sup>9</sup>, և մի պարոն, որ վիրաւորուած Ղամազովին կը տաներ դէպի կառքը: Մօտեցայ, օգնեցի անոնց և գացի վակգալ՝ բժիշկ բերելու համար:

Քաղաք երբ վերադարձայ, ճանապարհին հանդիպեցի Աբրահամին<sup>10</sup>, նստայ իրեն կառքը, ուզեցի իրեն պատմել եղածը, բայց մի երրորդ անձ [ներկա] լինելուն՝ լուռ գացի:

Այնուհետև, մտայ պարլամենտի շինութիւնը, մի ժամ յետոյ եկան կապ. [իտան] Կասումեանը, Միսաքը (Դրօի թիկնապահ) և Ալեքը: Կասումեան ինձ ըսաւ, որ թղթերը իր սենեակն են, իսկ իրերը և փողերը (4.500 ր. [ուպլի]) պահած ենք: Հարցուցին ինձ, թէ ի՞նչ ընինք: Խորհուրդ տուի, որ պահեն և առայժմ տունէն դուրս չելնեն:

Ճանապարհին հանդիպեցայ Դրօին, բոլորը պատմեցի: Գացի նայեցայ թղթերը և պատմեցի Կորիւնին ալ: Երեկոյեան ինձ մօտ եկաւ կապիտան Մուրադեանը, մինչ այդ ես Լ. Քալանթարեանի հետ նայեցայ տօկումնտները<sup>11</sup> և ոչինչ գտայ: Կապիտան Մուրադեանին հետ ալ նայեցայ թղթերը և բան չգտայ:

Ի վերջոյ, ուրիշներու միջոցաւ միայն ես իմացայ, որ իբրև թէ Ղամազովի թիկնապահը ըսեր է, թէ [երբ] գեն. [երալ] Ղամազովը հիւանդանոց բերեն՝ իր մօտ կուգայ Զիննիչը<sup>12</sup> և կը հարցնէ Ղամազովին, թէ ո՞ր են թղթերը: Նա ալ կը պատասխանէ, թէ իր տունը տարուած են: Պէտք է աւելացնել նաև, որ Ղամազովի իրերի մէկ մասը վակգալ տարուած են ուրիշ ֆայթոնով մը և մի չամատան<sup>13</sup> ալ ապրանքատար օթոնոպիլով տարուած է: Փրափօրչիկը<sup>14</sup> հրամայէր է, որ ատոնք պէտք է հետը երթան, որովհետև Ղամազովինն են:

Միւս օրը գացի Աբրահամին քով: Չգտայ: Երրորդ օրը գացի ու տեսայ: Աբրահամը Դրօէն ամէն բան լսէր էր և չափազանց զայրացած էր: Առաջարկեցի ես, որ Բիւրօն ժողով ընէ և եթէ որոշէ՝ ես ինքս կը յանձնուիմ իշխանութեան:

Բիւրօի ժողովին մէջ կարծիքները երկուքի բաժնուեցան: Մի քանիսը առաջարկեցին ինձ ներկայանալ, մի քանիսը դէմ էին և կ'առաջարկեին գործս կուսակցական դատարանի յանձնել: Ես ինքս առաջարկեցի յանձնուել կառավարութեան և յայտնել բանակի մէջ կատարուող ինտրիզների մասին՝ ի նպաստ կամաւորականների: Մի քանիսը սակայն մերժեցին: Դրօն շատ անհանգիստ էր, որ առանց իր գիտութեան՝ ես վերցուցեր եմ իր թիկնապահը, քանի որ այդ կերպով ամբողջ կասկածը իր վրայ պէտք է իյնար:

Տեսնելով որ մեծամասնութիւն չգոյացաւ՝ ես ինքս առաջարկեցի քննիչի մօտ գնալ և պահանջել, որ Դրօի թիկնապահը չհարցաքննուի: Բիւրօն համաձայնեցաւ: Ես այնուհետև խօսեցի [արդարադատության] մինիստրի օգնականին հետ, և ան յայտնեց, որ ինք տեղեկութիւն չունի Դրօի թիկնապահի մասին: Մի աֆիցեր<sup>15</sup>,

8 Կայարան – ռուսերեն:

9 Կառք:

10 Նկատի ունի Աբրահամ Գյուլխանդանյանին:

11 Փաստաթղթեր:

12 Դենիկինի Կամավորական բանակի և ապա Ռուսաստանի Հարավի զինված ուժերի պաշտոնական ներկայացուցիչը Երևանում:

13 Ճամպրուկ – ռուսերեն:

14 Ենթասպա – ռուսերեն:

15 Սպա – ռուսերեն:

Գեորգով, եկեր ասել է, որ Դրօի թիկնապահին տեսած է, և այդքան: Ուրիշ տեղեկություն ստացուել է քննիչի մօտ, թէ կողոպտիչները փախած են Էջմիածին:

Բիւրօի նիստին մէջ ես չեմ յայտնած գործին բոլոր մասնակից եղողներուն անունները: Ես կը զգամ իմ մեղքը կուսակցութեան առաջ, ես պարտաւոր էի գոնէ Բիւրօի մէկ անդամին յայտնելու իմ ընկելիքի մասին, այդ մասին ես մտածեցի, երբ կայարանն էի, բայց արդէն ուշ էր: Իմ հոգեկան տանջանքները աչքի առաջ ունենալով, ես կ'ուզեի, որ Բիւրօն ինձ թոյլ տար կառավարութեան յայտնելու ամեն բան: Ես կամաւորական բանակի հետ գործ ունեի և ինձ տենիքիներէն<sup>16</sup> կ'անուանեին, իմ ժողովուրդի ֆիզիքական գոյութեան համար, սակայն ես սատանայի հետ ալ կարող էի գործ ունենալ:

Կասումեան, Միսաք և Ալեք մեղք չունեն, որովհետև ես գործը կազմակերպած եմ՝ Մուրադեանի անունով: Ղամազով չպիտի վիրաւորուեր, եթէ ատրճանակով չուզեր ինքնապաշտպանուել: Այս պարագան ոչ մէկս չէինք նախատեսած:

Խնդրեմ վերոյիշեալ վկաները քննեցեք, այդ կերպով իմ պատասխանատուութեան չափը կը մեղմանայ: Կը խնդրեմ նաև, որ շուտով ինձ դատեք, որովհետև դատի ներքո ըլլալով՝ չեմ կարող ոչ անձնական, ոչ ալ հասարակական գործի ձեռնարկել: Յոյս ունեմ, որ ընկերներս նկատի կունենան իմ 18 տարուայ աշխատանքը, իմ զղջումը և գիս չեն խայտառակեր կուսակցութեան և կառավարութեան առաջ»:

Որոշուեցաւ հետզհետէ հարցաքննել Լ. Քալանթարեան, Կասումեան, Տէր Օհանին, կապիտան Մուրադեան, Ալեք, Միսաք: Տեսնել նաև Աբրահամ, Ռուբէն, Վրացեան: Որոշուեցաւ երեկոյեան նիստ ունենալ և հարցաքննել Լ. Քալանթարեան:

Դատական Ատեանի  
Նախագահ՝ Յ. Տէր-Դաւթեան [ստորագրություն]  
Անդամներ՝ Մ. Օզանեան [ստորագրություն]

31-րդ Նիստ

21 Յունվալր. 1920

Ներկայ էին՝

Ընկերներ՝ Յովսէփ Տէր-Դաւթեան, Մերուժան Օզանեան:

Օրակարգ՝

1. Լևոն Քալանթարեանի ցուցմունքները Ղամազովի գործի առթիւ:

Լուծում

1. Ընկ.[եր] Քալանթարեանի ցուցմունքները Ղամազովի գործի առթիւ հետևեալն են.

«Քլուպն էի, ինձ մոտեցաւ կապիտան Մուրադեանը (զինուորական շտապի քօնթրա-խուզարկու պետը) և ըսաւ, որ գեն.[երալ] Ղամազով վաղը կանուխ կը մեկնի, անոր վրայ լուրջ կասկածներ կան, թէև կըստի, որ Կարս պիտի երթայ, բայց իրապէս Տենիքիին մօտ է, որ կ'երթայ՝ իր հետ տանելով բազմաթիւ կարևոր թղթեր, ինչպէս ընինք, որ այդ թղթերը անկէ խլինք: Ես առաջարկեցի այդ գործը վրաս առնել: Մեզ մօտ էին Միշա Արզումանեան, Շահիսաթունի, Տէր-Օհանեան: Սկսանք միասին քննել գործը: Միշան յայտնեց, որ կայարանի ճամբուն վրայ պէտք է այդ գործը ի գլուխ հանել: Ես ինքս դէմ էի ասոր՝ ըսելով, որ մարդ կ'սպանուի և անհամութիւն դուրս կուգայ: Միշան այն ատէն ըսաւ, թէ այդ գործը ես իմ վրայ կ'առնեմ, առաւօտուն երբ ան կ'երթայ, կը կանգնեցնեմ կառքը, և չամադանները առնելով՝ կը տանեմ:

16 Ռուսաստանի Հարավի զինված ուժերի գլխավոր հրամանատար գեներալ Անտոն Դենիկինի անունով:

Գիշերուայ ժամը 10-ն էր: Ոչ մէկս խնամ էինք: Բոլորս միասին հազիւ մէկ շիշ գինի խնամ էինք:

Առաւօտ երբ եղաւ՝ Միշան ըսաւ, որ Ղամազով սպանուած է, կանգնեցուցեր են կառքը, առեր են չամադանները, և երբ ան ուզեր է ինքնապաշտպանուել՝ վիրաւորուել է:

Վիրաւորուելու օրը հասարակութեան մէջ զանազան խօսակցութիւններ կը շրջէին Ղամազովի սպանութեան առթիւ: Բոլոր թղթերը և նամակները բացինք, բայց ոչինչ չգտանք: Թղթերուն մի մասը միայն, որ մէկ չամադանին մէջ էր, մեր ձեռքը ընկան: Միւս մասը իրերի միւս չամադանին մէջ էր, որ դրկուած էր կայարան:

Դրամը – 4.500 ր.[ուրի], յանձնարարեցի, որ լաւ պահեն:

Ճիշտ է, թղթերուն մէջ ոչինչ գտանք, բայց կասկածէ դուրս է, որ Ղամազով կ'երթար Տենիքիի մօտ ծառայելու, ապացոյց այն, որ իր քովէն գտանք իր ծառայութեանց ցուցակը և իր քով գտնուած հարիւրաւոր նամակները, որոնք ուղղուած էին Տենիքիի բանակին մէջ ծառայող զինուորներուն և սպաներուն:

Մեր խորհրդակցութեան գիշերը ես ըսի Միշային, թէ պէտք է այս մասին Բիւրօի կարծիքն ստանալ: Նա ինք ըսաւ, որ ժամը 10-ն է, երբ կրնանք տեսնել, ժամանակ չկայ և կրնանք Ղամազովը փախցնել»:

Դատական Ատենանի  
Նախագահ՝ Յ. Տէր-Դաւթեան [ստորագրութիւն]  
Անդամներ՝ Մ. Օզանեան [ստորագրութիւն]

### 32-րդ Նիստ

24 Յունվ[ա]ր. 1920

Ներկայ էին՝

Ընկերներ՝ Յովսէփ Տէր-Դաւթեան, Լևոն Թադէոսեան, Մերուժան Օզանեան:

Օրակարգ՝

Նախորդ երեք նիստերու արձանագրութեանց ընթերցում և վաւերացում:

Սարգիս Մանասեանի հարց:

Լուծում

Կարդացուեցան, և փոքրիկ փոփոխութիւններէ և սրբագրութիւններէ յետոյ՝ վաւերացուեցան նախորդ երեք նիստերու արձանագրութիւնները:

Սարգիս Մանասեան, որուն ներկայացուած էին մեղադրական մի շարք կէտեր՝ քաղուած Արևելեան Բիւրօի Քննիչ Յանձնաժողովի կազմած զեկուցագիրներէն, ներկայացած էր մեզ իրեն ուղղուած մեղադրանքներուն առթիւ բացատրութիւններ տալու համար: Հրաւիրուած էր նաև այդ Քննիչ Յանձնաժողովի նախագահ ընկ. Երուանդ Տէր-Մինասեանը: Ընկեր Մանասեան իրեն ուղղուած մեղադրանքներու մասին բերանացի տուաւ մի շարք բացատրութիւններ: Դատական Ատենաս յայտարարեց իրեն, որ այդ խնդրի, ըստ էութեան, քննութիւնը չկատարուել՝ մինչև որ ինք մեր դրած հարցերուն գրաւորապէս չպատասխանէ: Ընկ. Մանասեան խոստացաւ այդ ընել:

Դատական Ատենանի  
Նախագահ՝ Յ. Տէր-Դաւթեան [ստորագրութիւն]  
Անդամներ՝ Մ. Օզանեան [ստորագրութիւն]

25 Յունվ[ար]. 1920

Ներկայ էին՝

Ընկերներ՝ Յովսէփ Տէր-Դաւթեան, Լևոն Թադէոսեան, Մերուժան Օզանեան:

Օրակարգ՝

Ընկերներ Ս. Վրացեանի և Ռուբէնի՝ գեն.[երալ] Ղամագովի սպանութեան առթիւ տուած ցուցմունքները:

Յովհաննէս Սարգսեանի հարց,

Արարատ Տէր-Գրիգորեանի յարուցած հարց:

Լուծում

1. Ղամագովի սպանութեան առթիւ հրաւիրուած էին ընկերներ Ս. Վրացեան և Ռուբէն, որոնք այդ հարցի մասին տուին հետևեալ ցուցմունքները Դատ.[ական] Ատեանին:

Ս. Վրացեան.

«Առաւօտ մը լսեցինք, որ գեն.[երալ] Ղամագովը սպանուեր է, կարծեմ՝ Միշան ինքը պատմեր է մեր ընկերներուն գործի էությունը: Քլուպն է եղեր ինք: Իր հետ կը տեսնուի կապիտան Սուրադեանը, որ կը յայտնէ, թէ հետևեալ օրը կանուխ Ղամագով կը մեկնի Հիւս.[իսային] Կովկաս, իր հետ տանելով գինուորական կարևոր թղթեր, գոր պէտք է անոր ձեռքէն խլել: Միշան կ'ըսէ, թէ այդ գործը ես վրաս կ'առնեմ, կը կանչէ իր տղաներէն Ղասըմը, Դրօի տղաքներէն՝ Ալէքը և Միսաքը, և կ'ըսէ, որ պատրաստ ըլլան այդ գործը ի գլուխ հանելու համար: Միսաքը ձիով կանգնած է եղեր քաղաքին կողմը, իսկ միւսները՝ դէպի յառաջ: Միսաքը երբ նշան կուտայ՝ միւսները իսկոյն կը յարձակին Ղամագովին վրայ: Իրենց ըսելով՝ Ղամագովը դիմադրել է, ատոր համար անոնք ալ զարկեր են: Տեսնողներ եղեր են Միսաքին և Ալէքին, այդ պատճառով լուրջ կասկածներ կը հրաւիրուին Դրօի վրայ:

Իսկոյն Բիւրօի ժողով ըրինք, կանչեցինք կառավարութեան անդամներէն Արարահամը, Նիկօլը<sup>17</sup>: Այդ նիստին ներկայ էր նաև Դրօն: Ժողովին մէջ հաստատուեցաւ այն, ինչ մենք լսած էինք: Այս դէպքի առթիւ հասարակութեան մէջ սկսեր են կասկածներ ունենալ Դրօի մասին, մանաւանդ, որ դէպքէն անմիջապէս վերջը Դրօն Միսաքին հետ միասին կ'երթայ դէպքին վայրը:

Սկսանք մտածել, թէ ինչպէս լուծենք այդ հարցը: Ընկերներէն ոմանք կը պնդէին, որ պէտք է գործը յանձնուի դատարանին, ուրիշներ դէմ էին, պատճառաբանելով, որ քանի որ գործի մէջ Դրօի մարդիկ կան՝ սկանդալներ յառաջ կուգան: Դրօն ինքն ալ կը վարաներ մի վճիռ տալ, նոյնպէս և Արարահամը: Մի քանիներ արդէն այս գործի մասին իմաց տուեր էին քննիչին և Արդարադատութեան նախարարի օգնականին:

Կանչեցինք Միշային, նա ըսաւ, որ ոչ մի նպատակ չէ ունեցած Ղամագովին սպանելու կամ թալանելու, այլ ուզած է թղթերը առնել: Ղամագով դիմադրեր է, և այդ պատճառով ալ՝ վիրաւորուեր:

Լսեցինք ի վերջոյ, որ Ղամագով ըսեր է, թէ ինք կը ձանձնայ գինքը վիրաւորողները, բայց չգիտեր անոնց անունները: Ատոր վրայ՝ որպէս թէ մի քանիներ ուզեր էին հիւանդանոց մտնել և զայն սպանել, բայց չէին յաջողեր:

Յաջորդ օրը Միշան դատախազին ու Արդարադատութեան մինիստրի օգնականին կ'երթայ, և յայտնելով եղածը՝ կ'առաջարկէ գործին ընթացք չտալ, նկատի ունենալով, որ այդ կերպով գործը կրնայ քաղաքական կերպարանք ստանալ:

Միշան մեզ ըսաւ, որ եթէ կուսակցութիւնը մի ունէ որոշում տայ՝ ինք կ'ենթարկուի, բայց եթէ դատ լինի, պիտի երևան գան շատ բաներ, որոնք կը կատարուին մեր բանակին մէջ՝ ի նպաստ տենիքինեաններու: Առհասարակ կուսակ-

17 Նկատի ունի Նիկոլ Աղբալյանին:

Վէմ համահայկական հանդես 2 (ՃԲ) քաղթ, թիվ 1 (45) հունվար-մարտ, 2014

ցութիւնը և Դրօն չվարկաբեկելու համար չուզեցինք խնդիրը յանձնել կառավարութեան:

Դրօն ոչ մի մեղք չունի այդ խնդրին մէջ:

Ինձ համար պարզ չէ, արդէօք այս սպանութիւնը կատարուած է քաղաքական նպատակով թէ թալանի համար: Իմ անձնական համոզումս այն է, որ Ղամազովը վատ տիպի մէկը եղած լինելով՝ տղաք որոշած են զայն սպանել»:

Ռուբէնի ցուցմունքները.

«Լաւ չեմ յիշեր, բայց կարծեմ Միշան ինքը այդ խնդիրը մեզ իմացուցած է: Ունեցանք այդ առթիւ Բիւրօի նիստ, ուր խնդիրը պարզուեցաւ: Միշան քլուպը նստած է եղեր, կապիտան Մուրադեան ըսեր է անոր, թէ Ղամազով թղթեր կը տանի իր հետ, զանոնք պէտք է ձեռքէն առնել: Լևոն Քալանթարեանին ալ կ'իմացնեն այս մասին: Միշան իրա խելքին մի քանի տղայոց – Ղասրմին, Ալէքին կ'ըսէ կուսակցութեան անունով, թէ որոշուած է այդ թղթերը անոր ձեռքէն առնել, որպէս թէ՛ այս մասին նախապէս մեզ իմաց պիտի տուած եղեր, բայց ուշ եղեր է: Դրօն բարկացաւ Միշայի վրայ, թէ ինչո՞ւ առանց իրեն հարցնելու՝ իր տղաքը այդպիսի գործի մղած է, որոնք կարծած են, թէ գործի մէջ կուսակցութեան և Դրօի համաձայնութիւնը կայ:

Մենք ուզեցինք այս խնդիրը քննել: Բիւրօին մէջ մեզմէ ոմանք կողմնակից էին, որ Միշան յանձնուի իշխանութեան, միւսներ դէմ էին՝ ըսելով, որ կուսակցութիւնը և Դրօն գուր տեղը կասկածի ներքև կ'երթան և եղածը հակատենիքինեան շարժում կը նկատուի: Մեծամասնութիւն չկայանալուն՝ որոշում չկայացաւ: Եթէ Միշան կառավարութեան յանձնուեր՝ պիտի ըսեր, որ գործի կազմակերպողը ինք եղած է և միւսներ յանցաւոր չեն:

Այս եղածը աւագակութեան դէպք չէ: Ապացոյց այն է, որ երեկոյեան այս մասին կը խօսին, կը ծրագրին, առաւօտուն կը գործադրին: Գործը քաղաքական բնաւորութիւն ունի և կազմակերպուեր է թեթևութեամբ, անիշխանականօրէն: Միշան կուսակցութեան անունով գործի լծեր է տղաքը:

Այս դէպքի առթիւ Դրօին կը նկարագրեն մի ձիաւոր: Դրօն կասկածելով, թէ մի գուցէ Միսաքը լինի այդ, կը կանչէ զայն և հարցաքննութեան պահով Միսաքը կը յայտնէ, որ Միշան է կուսակցութեան անունով զինքը գործի մղած և ինք կարծած է, որ Դրօի համաձայնութիւնն ալ կայ: Եվ իրօք, Միշան կուսակցութեան անունով խօսած է տղոց հետ: Հետևեալ օրը, երբ մենք տղաքը տեսանք, կը զարմանային, որ մենք իրենց շնորհակալութեան քանի մը բառեր չէինք ուղղեր»:

2. Որոշուեցաւ Յովի. Սարգսեանցի հարցի առթիւ հրաւիրել մեր նիստերէն մէկին Վրաստանի Կեդ.լրոնականի կօմիտէի անդամ Միհաս Մակարեանը և այդ խնդրի առթիւ անոր ցուցմունքները ստանալ:

3. Արարատ Տէր-Գրիգորեանի հարցի առթիւ երբ Բանուոր Սէրգօս հրաւիրուեցաւ Դատ.խականի Ատեանիս նիստին այդ մասին բացատրութիւններ տալու համար, Բանուոր Սէրգօս խոստացաւ իր քով եղած 10.500 ր. [ուրլի] վերադարձնել մեր միջոցաւ խնամատարութեան միւնիստրութեան: Որոշուեցաւ գրել Բանուոր Սէրգօսին, որ եթէ մինչև մարտի 1-ը իր խոստումը չկատարէ, Դատական Ատեանս իր մասին կը տայ պատշաճ որոշում և զայն կը հրապարակէ:

Դատական Ատեանի

Նախագահ՝ Յ. Տէր-Դաւթեան [ստորագրություն]  
Անդամներ՝ Մ. Օզանեան [ստորագրություն]

34-րդ Նիստ

26 Յունվ[ա]ր. 1920

Ներկայ էին՝

Ընկերներ՝ Յովսէփ Տէր-Դաւթեան, Լևոն Թադէոսեան, Մերուժան Օզանեան:



Օրակարգ՝  
Շարաֆեանի հարց:  
Լուծում

1. Շարաֆեանի հարցի վերաբերեալ թղթերը մի անգամ ևս այք է անցուեցան: Դատ.[ական] Ատեանս նախ քան որոշում մը տալը այս մասին՝ որոշեց գրել ընկ. Շարաֆեանին, որ երբ Ալէքսանդրապօլ կ'երթայ, իր հետ բերէ անպատճառ N 4, 5 և 6 խնդիրներու՝ իր դէմ յարուցուած փաստաթղթերը, զանոնք Դատական Ատեանիս ներկայացնելու համար:

Դատական Ատեանի  
Նախագահ՝ Յ. Տէր-Դաւթեան [ստորագրություն]  
Անդամներ՝ Մ. Օզանեան [ստորագրություն]

35-րդ Նիստ

27 Յունվ[ար]. 1920

Ներկայ էին՝

Ընկերներ՝ Բժիշկ Յովսէփ Տէր-Դաւթեան, Լևոն Թադէոսեան, Մերուժան Օզանեան:

Օրակարգ՝

Ղամազովի սպանութեան առթիւ կապիտան Մուրադեանի ցուցմունքները, Յովհաննէս Սարգսեանցի մասին Մինաս Մակարեանի և Մ. Օզանեանի ցուցմունքները:

Լուծում

2-ն յիշեր որ երեկոյեան էր, պուլվարն<sup>18</sup> էի գացեր պտոյտի, յետոյ անցայ քլուպը, ուր կը գտնուէր Միշա Արզումանեանը, Տէր Օհանեանը, Շահխաթունեանը, Լևոն Քալանթարեանը: Սկսանք խօսել հայ և ռուս յարաբերութիւններու մասին: Յայտնեցի այդ մասին Միշային, որ գեն.[երալ] Ղամազով վաղ առաւօտ կանուխ կը մեկնի Հիւսիս.[ային] Կովկաս և ապահովաբար իր հետ կը տանի զինուորական կարևոր թղթեր Տենիքիին բանակին համար: Ըիշտ այդ օրն ալ ես տեսած էի Ղամազովը, որ Զինկիչի օգնականին՝ Շումովի հետ, տաք-տաք կը խօսէր: Ասոնց երկուքին վերաբերմունքը դէպի մեր Հանրապետութիւնն առհասարակ իմ վրայ վատ ազդած էր: Հետախուզական բաժնի վարիչ լինելով՝ բնական է ի պաշտօնէ հետաքրքրվում էի, թէ Ղամազով հո հետը բան մը կը տանի:

Սկսանք մտածել, թէ ո՞վ այդ գործը կրնայ յաջողութեամբ ի գլուխ հանել: Ես չէի կրնար ստանձնել, որովհետև պաշտօնական անձ էի: Լևոնը իր ծառայութիւնը առաջարկեց: Միշան ըսաւ, որ ես փորձուած եմ, յանձնեցեք այդ գործը ինձի: Շարունակ ես այդ ատենները դիտել կուտայի, թէ գործը պէտք է ի գլուխ հանել առանց աղմուկի, առանց Ղամազովի մագին իսկ դպնելու: Կատարուելիք գործի ծրագրին մասին չխօսեցանք, որովհետև Միշան ըսաւ, թէ ամէն բան ինձ ձգեցեք և իմ ընելիքի մասին մի միջամտեք, որպէսզի չխանգարուեմ:

Հետևեալ օրը թելեֆոնով<sup>19</sup> ինձ լուր տուին, թէ Ղամազով սպանուած է: Ի վերջոյ, Հախվերդովէն միայն իմացայ, որ վիրաւորուէր է:

Ես որ այս գործին մէջ մտայ՝ տեսայ, որ ամէն բան խառն է, աշխատողներուն քով պատասխանատուութեան զգացում չկայ, կարևոր թղթեր անփութութենէն հոս-հոն են ձգուած: Ինձմէ առաջ կը գործէր Շնետրը, անոր մօտ ես տեսած էի Հայաստանի, Վրաստանի, Ատրբէջանի զօրքերու քանակութեան և դասաւորման մասին թղթեր ու յատակագծեր: Շնետրի գործէն հեռանալէն յետոյ այդ թղթերը

18 Պուրակ:  
19 Հեռախոս:

ես չկրցայ գտնել, ասոր վրայ մի տեղեկագիր տուի գեն.[երայ] Արարատեանին<sup>20</sup> և Միլիկեանին, որոնք իմ թղթին ետև գրեցին, թէ այսուհետև պէտք է ամէն միջոց ձեռք առնել նման դէպքերու առջև առնելու համար: Օրինակը տալով ըսել կուզեմ, որ մեր բանակին մէջ Հանրապետութեան հանդէպ լաւ չտրամադրուած պաշտօնեաներ կան:

Սպանութեան մասին լսեցի այսպէս. նա կառքով կ'երթայ եղեր, կանգնեցուցեր են կառքը և ըսեր իրեն, որ դուրս գայ, բայց նա դիմադրեր է, որու հետևանքով՝ վիրաւորուեր: Քովէն փող գտեր են, բայց չգիտեմ ինչքան: Ես չեմ ալ գիտեր, թէ Միշան այս գործը որոնց յանձնած է: Ղամազովի թղթերը ես չեմ տեսած: Որպէս թէ Ղամազով կը ճանչնայ եղել զինքը վիրաւորողներու անունները, բայց չգիտեր անոնց անունները\*:

Ղամազովի սպանութեան առթիւ Միշան շատ վատ էր տրամադրուած:

Ընկեր Մ. Մակարեան յայտնեց Դատ.[ական] Ատեանիս, թէ Վրաստանի Կեդր.[րոնական] կօմիտէն պաշտօնապէս ոչինչ գիտէ Յովի. Սարգսեանցի լրտես սը եղած ըլլալուն մասին, բայց մենք Վրաստանի հետախուզական բաժնի մէջ ընկերներ ունեցած ըլլալով՝ անոնք մեզ յայտնած են, թէ Սարգսեանց կասկածելի է, որովհետև շարունակ վրացիներուն հետ գործ ունեցած է և շփուած է այնպիսի շրջանակներու հետ, որոնց հետ մեզմէ ունէ մէկը հնարաւորութիւն չէր ունենար գործ ունենալու:

Մ. Օզանեան ևս յայտնեց, որ ինք այսօր տեսած է Յովի. Սարգսեանցը, որ իրեն խնդրած է շուտով իր գործին ընթացք տալ: Օզանեան յայտնեց, թէ Սարգսեանց Թիֆլիսէն նոր վերադարձեր է՝ իր հետ բերելով 50-100.000 ռուպլիի կաշի և թէ ան Բիւրօէն թուղթ մըն է ստացեր՝ իր անմեղութիւնը հաստատող: Իր լսօսակցութեան ընթացքին Սարգսեանց յայտնէր է, որ կը փափագի դարձեալ Կարս մէկնել:

Դատական Ատեանս այս ցուցմունքները լսելէ յետոյ, գտաւ որ իրօք Սարգսեանց կասկածելի է նաև անոր համար, որ ան մեր կառավարութեան հետախուզական բաժնի մէջ գործող ընկերներու կողմէ կասկածելի դարձած է՝ գործ ունենալով վրացական այնպիսի շրջանակներու հետ և շփուելով այնպիսի վրացիներու հետ, որոնց հետ մեզմէ ունէ մէկը հնարաւորութիւն չէր ունենար գործ ունենալու: Երկրորդ, որ ան ինչպէս միշտ՝ այս անգամ ալ փափագ յայտնած է Կարս երթալ: Երրորդ, երբ շարունակ մեզ կը յայտնէ, որ ինք դրամ չունի, քաղցած է՝ յանկարծ 50-100.000 ռուպլիի կաշի կը բերէ Թիֆլիսէն, բան սը, որ անհնար է Հայաստանի քաղաքացիներուն համար: Դատ.[ական] Ատեանս որոշեց Բիւրօի միջոցաւ թելադրել Լևոն Քալանթարեանին, որ հսկէ Սարգսեանցին վրայ ու Թիֆլիս գնալու ժամանակ բռնէ զայն, Բիւրօի տուած թուղթը առնէ իր քովէն և զայն Հայաստանի սահմաններէն դուրս ընէ: Միաժամանակ, Դատ.[ական] Ատեանս որոշեց տեղեկացնել Բիւրօին, թէ ինք իրաւունք չունէր Սարգսեանցին այդպիսի թուղթ մը տալու, երբ անոր հարցը մեր կողմէն չէր վճռուած:

Դատական Ատեանի

Նախագահ՝ Յ. Տէր-Դաւթեան [ստորագրություն]  
Անդամներ՝ Մ. Օզանեան [ստորագրություն]

20 Արարատյան Քրիստափոր (Խաչատուր) Գերասիմի (18.06.1876, Նալչիկ, ՌԴ-10.12.1937) – ռազմական գործիչ: 1919 թ. ստացել է հրետանու գեներալ-մայորի կոչում և մինչև 1920 թ. մայիսը եղել Առաջին Հանրապետության զինվորական նախարար, ապա՝ ՀՀ բանակի հրետանու պետ: 1921-1925 թթ. ծառայել է խորհրդային բանակում: Գնդակահարվել է Երևանի Ավանի ձորում:

\* Բնագրում այսպես է:

28 Յունվ[ար]. 1920

Օրակարգ՝

Պետական Դատախազի կատարած քննությունը գ.[եներալ] Ղամազովի սպա-նություն և առթի՝ յայտնուած Յովսէփ Տէր-Դաւթեանի և Լևոն Թաղէտեանի:

Լուծում

Երբ Ղամազով կը վիրաւորուի, պետական դատախազը իսկոյն կը դիմէ անոր՝ կատարուած դէպքի առթիւ քննություն կատարելու համար: Ահաւասիկ, այդ քննութեան արդիւնքը:

Ղամազով երկու ամսով վերցուցեր է արձակուրդ Վորոնեժ քաղաքը երթալու, իր պառավ մայրը գտնելու համար, որու մասին 2-3 տարիէ ի վեր տեղեկութիւն չունի եղեր: Հոկտ.[եմբեր] 25-ի առաւօտեան ժամը 8-ին նստած պետական կառքը՝ կ'ուղևորուի դէպի Երևանի կայարանը: Կառքին մէջ իր կողքին նստած է եղեր տէնչիկը<sup>21</sup> - Արիստակէս Մնացականեան: Կառքը կը վարէ եղեր տաճկահայ մը - Սուխայէլ Մանուկեան:

Ճանապարհին յանկարծ անկիւնի փողոցէ մը դուրս կուգան երկու երիտասարդներ, ձեռքերնին ընկալուի բռնած: Կը կանգնեցնեն կառքը և կը յարձակուեն Ղամազովի վրայ: Վերջինս ահաբեկուած կ'աղաղակէ - ասեք ամէն բան, ինչ-որ կ'ուզեք, միայն խնայեցեք կեանքս:

Յարձակողները, սակայն, դուրս կը հանեն զայն կառքէն և մի կողմ տանելով՝ կը խփին ընկալուի:

Ղամազով յայտնէր է դատախազին, թէ իր հետ կը տանի եղեր երկու չամադան, մէկը մեծ, միւրը՝ փոքր, մի կապոց սպիտակեղեն, մի ուրիշ՝ խաղող և իր ձմեռնային վերարկուն: Ձեռը ատրճանակ ունեցեր է, բայց ոչ գրպանը, այլ չամադանին մէջ: Հետն ունեցեր է նաև 22-23.000 ռ.[ուբլի] փող, որոնց մի մասը հիկոլայեան<sup>22</sup>, միւս մասը՝ տօսեան<sup>23</sup> փողեր են եղեր:

Ղամազով ըսեր է նաև, որ զինքը վիրաւորողները կը ճանչնայ, եթէ ցոյց տան իրեն, բայց չգիտեր անոնց անունները:

Կառապանին և թիկնապահին ցուցմունքները.

Կառապանին և թիկնապահին ցուցմունքները ևս նոյնն են, միայն անոնք աւելցուցեր են, թէ յարձակողները երեք հոգի են եղած - մէկը ձիու վրա նստած, միւսները՝ հետիոտն: Ատոնցմէ մէկը առաջնորդեր է զանոնք դէպի աւերակ տներու կողմը, իսկ միւսները գեներալը քաշեր են հակառակ կողմը: Յանկարծ ատրճանակի ձայն լսուի է և անոնք նկատեր են գեներալին իյնալը: Յետոյ լսուի է սուլիչի ձայն մը, որուն վրայ յիշեալ երկուքը իրերը վերցուցած կառքով անցեր-գացեր են: Ձիաւորն ալ ուրիշ ճամբով մը փախեր է:

Ճանապարհին մի զինուորական սպայ կը հանդիպի Ղամազովին գետին ինկած և շրջապատուած կիներէ և երեխաներէ, որոնք հետաքրքրութեամբ կը դիտեն վիրաւորուածը, առանց օգնութիւն հասցնելու: Ինք կը կապէ գեներալին վերքը, կը նստեցնէ զայն կառքին մէջ և կը տանէ կայարան՝ բժիշկին յանձնարարելու որ վերքը կապեն: Վերքերը կապուելէն յետոյ՝ Ղամազով կ'ուղարկուի զինուորական քաղաքային հիւանդանոցը:

Դատախազի օգնականին ցուցմունքները.

Դատախազի օգնական Մալխասեան ևս ըսեր է, որ երբ կանչեցին լրտեսող շունը խուզարկութիւն կատարելու համար և սպանիչներուն հետքը գտնելու, դէպքէն վայրը կը գտնուի եղեր Դրօս, որը յայտնէր է, որ լրտեսող շան պէտք

21 Համհարզ:

22 Նկատի ունի Ռուսաստանի ցար Նիկոլայ 2-րդի օրոք շրջանառվող դրամը:

23 Դոնի երկրամասում, որը գտնվում էր Ռուսաստանի Հարավի գիւնված ուժերի հսկողութեան ներքո, շրջանառվող դրամը:

2 (ՃԲ) փարի, թիվ 1 (45) հունվար-մարտ, 2014

Վէմ հասանալիական հանդես

չկայ, ինքը անձամբ պիտի կատարէ քննութիւն: Իսկ Անդրեյ Ֆէօտրովիչ Պասիչնիկ, որը լրտեսող շանը հետ մէկտեղ եկեր է դէպքի վայրը խուզարկութիւն կատարելու համար, յայտնէր է որ այնտեղ ամեննին ներկայ չէ եղեր Դրօն և իրա խուզարկութեան ժամանակ ոչ ոք իրեն չէ միջամտեր և չի խանգարեր: Շունը կը հոտոտէ գէներալի ինկած տեղը և ապա հետքերով կ'սկսի կողքի փողոցով յառաջ երթալ, երբ կը հասնի քաղաք՝ շունը այլևս չի կրնար իր հետախուզութիւնը շարունակել, որովհետև փողոցները ջրուած են եղեր և անցնող-դարձողներու բազմութիւնը՝ մեծ:

Դատական Ատենի  
Նախագահ՝ Յ. Տէր-Դաթեան [ստորագրություն]  
Անդամներ՝ Մ. Օզանեան [ստորագրություն]

### 37-րդ Նիստ

30 Յունվալր. 1920

Ներկայ էին՝

Ընկերներ՝ Յովսէփ Տէր-Դաթեան, Լևոն Թադէոսեան, Մերուժան Օզանեան:  
Օրակարգ՝

Ղամազովի սպանութեան առթիւ Միսաքի ցուցմունքները:

«Քլուպն էինք: Ժամը կար 10-11-ը: Միշան մեզ ըսաւ, որ Ղամազով վաղը առաւօտ կ'երթայ և իր հետ կը տանէ տօկումէստներ<sup>24</sup>. պէտք է վերցնենք ատոնք և գինքն էլ խուզարկենք: Ես էի, Ալեքը և Ղասըմը: Միշան նախ Ղասըմին էր ըսած այս բանը, Ղասըմն ալ մեզ ըսաւ, բայց մենք յետոյ խօսեցանք Միշային հետ ալ, տուինք մեր համաձայնութիւնը: Միշայի ըսածէն այն տպաւորութիւնը ստացանք, որ նա կուսակցութեան անունով մեզ կը հրահանգէ:

Միշային հարցուցի, թէ եթէ Ղամազով մեզ դիմադրէ՝ ինչ ընինք. Միշան ըսաւ, որ կարող եք խփել:

Ֆայթօնը կանգնեցնողներն էին Ալեքը և Ղասըմը: Ես ձիու վրայ նստած նշան տուի: Կառքէն վար իջեցրեցինք, ասոր վրայ Ղամազով դիմադրեց, ատրճանակը քաշեց: Ղասըմը կ'սկսի Ղամազովին հետ չարչարուել, իսկ Ալեքը՝ թիկնապահին հետ, Ղասըմը պարապելու<sup>25</sup> ուներ ձեռքը: Կ'ուզեինք Ղամազովի ձեռքէն գէնքը խլել, այդ ատեն յանկարծ ատրճանակներէն մէկը պարպուեցաւ: Ալեքը և Ղասըմը այդ ատեն չգիտցան, թէ որո՞ւ ատրճանակը պարպուեցաւ:

Ֆայթօնձին վախցած իր տեղը մնաց, իսկ մենք Ղամազովին դիտմամբ չխփեցինք: Ղամազովին ատրճանակը պրաունինկ<sup>26</sup> էր, որ հիմա կը գտնուի Ալեքին մօտ: Ալեքը թիկնապահին վրայ կը հսկեր:

Գէներալին վիրաւորուելէն յետոյ՝ չամադանները դրինք մեր ֆայթօնը և տաւրինք:

Մեր տարածը երկու փոքրիկ չամադան էր և փալթօ<sup>27</sup> մը: Գացինք, բացինք թղթերը, ինձմէ առաջ անոնք արդեն բացած էին, 4-5.000 րուպլի փող գտնուեցաւ մօտէն, մօտ 2.000-ը՝ Տօնի<sup>28</sup> փողեր: Ղամազովի ծոցէն թղթեր ալ հանեցինք. նամակները յանձնեցինք Միշային: Չամադանները բացուեցան Ալեքի տանը:

Սկիզբէն Միշան չէ տեսած թղթերը, Ղասըմը հաւաքեց թղթերը և տուաւ Միշային: Չամադանին մէջ կային գէներալի ձերմակեղենները:

Դէպքէն վերջ, երբ Միշան տեսանք, նա մեզ նկատողութիւն ըրաւ, թէ ինչո՞ւ խփեցինք, մենք ալ՝ եղածը մանրամասնօրէն բացատրեցինք իրեն:

24 Փաստաթղթեր:

25 Ատրճանակի տեսակ:

26 Ատրճանակի տեսակ:

27 Վերարկու:

28 Դոնի:

Մի անգամ միայն հիւանդանոց գացած են Դրօին հետ, բայց վեր չեն ելած: Երկրորդ անգամ հիւանդանոց գացող չէ եղած: Ոչ ալ Ղասաբն է գացած, և դիտմամբ ոմանք լուր տարածած են, թէ յանի մի քանիներ ուզած են հիւանդանոց տունել:

Գեներալի կառապանին՝ վերջը 1.000 ռ.[ուրլի] փող տուինք մենք»:

Դատական Ատենանի  
Նախագահ՝ Յ. Տէր-Դաւթեան [ստորագրություն]  
Անդամներ՝ Մ. Օզանեան [ստորագրություն]

38-րդ Նիստ

3 Փետր.[վար] 1920

Ներկայ էին՝

Ընկերներ՝ բժիշկ Յովսէփ Տէր-Դաւթեան, Մերուժան Օզանեան:

Օրակարգ՝

Յ. Էլիբէկեանի հարց

Արևելեան Բիւրօի յարուցած հարցերուն առթիւ,

Պօլտոյ Պատասխանատու Մարմնին հաշիւներուն առթիւ հարցնել Բիւրօին,

Դեօյեանի հարց:

Լուծում

Վրաստանի Կեդր.[ոնական] կօմիտէի միջոցաւ Վիրահայոց Ազգ.[ային] Խորհուրդի N 1134 գործինւն-ամբաստանագիրը, որ եկած էր մեզ ընկ. Յ. Էլիբէկեանի մասին, ըստ էութեան հետևեալն է.

Գործադիր մարմինը իր մայիս 21-ի նիստի որոշմամբ՝ Դաղէթ-Խաչենի ներկայացուցիչների խնդրի համաձայն Ազգ.[ային] Խորհուրդի գումարներէն 3.000 ռ. [ուրլի] որպէս նպաստ Ալէքսանդրապօլէն 5 գութան և 150 փութ շղթայ Դաղէթ գիւղը փոխադրելու համար: Այդ գումարը ստացեր է Յ. Էլիբէկեանը որպէս գիւղացիներու ներկայացուցիչ իրերը փոխադրելու համար, բայց փոխսնակ այդ գումարը իր նպատակին գործածելու՝ գործածել է իր սեփական պէտքերուն, որոնց համար պատշաճ փաստաթուղթ ալ չէ ներկայացուցեր: Կօնտրօլէօրը<sup>29</sup> Էլիբէկեանի հաշիւները քննելով՝ անհրաժեշտ կը գտնէ, որ Գործադիր Մարմինը Էլիբէկեանէն պահանջէ անյապաղ վերադարձնել յիշեալ 3.000 ռ.[ուրլի] գումարը:

Համաձայն այս եզրակացութեան և Գործադիր Մարմնի որոշման՝ Էլիբէկեանը կը վերադարձնէ այդ գումարէն 1.700 ռ.[ուրլին], մնացած 1.300 ռ.[ուրլին] հաշուելով իր ճանապարհածախքին, որուն համար իր հաւանութիւնը կու տայ նաև Գործադիր Մարմինը, բայց կօնտրօլէօրը չի ընդուներ և կը պահանջէ ամբողջ գումարը:

Դարձեալ, կօնտրօլէօրը ծանօթանալով ալիւր բաժանող շրջանային լիազօրների գործունէութիւնը՝ կը գտնէ, որ կասկածելի և զեղծումների համար հնարաւոր ձևով է կատարուեր այդ բաժանումը Դաղէթի շրջանը Յով. Էլիբէկեանի լիազօրութեամբ:

Թիֆլիսէն երկու անգամ ալիւր է ուղարկուել Դաղէթի համար, մի անգամը սայլերով, միւս անգամը՝ երկաթուղիով Սանտար կայարանը: Երկու անգամն ալ ալիւրը ստացեր է Էլիբէկեանը և անմիջապէս կշռեր է տեղն ու տեղը: Այդ երկու անգամն ալ ալիւրի իրական քաշը անհամեմատ անելի է եղեր դուրլիկատի<sup>30</sup> մէջ նշանակուած քաշէն, մի անգամ փոխսնակ 765 փթի ստացուեր է 788 փ.[ուրթ] 34 գր.[վանքա], միւս անգամը փոխսնակ 404 փ.[ուրթ] 15 գր.[վանքա] – 418 փ.[ուրթ] 37 գր.[վանքա]:

Երրորդ անգամ Էլիբէկեանը ալիւր կ'ստանայ Սանտար կայարանը: Այդ ա-

29 Վերստուգող:

30 Փաստաթղթի կրկնօրինակը:

Ջ (ՃԲ) քարթի, թիվ 1 (45) հունվար-մարտ, 2014  
Վէ՛ն համահայկական հանդէս

լիւրը առանց կշռելու կը դրկէ գիւղ և ըստ կօնսորլէօրի՝ 29 փ.[ութ] 6 գրուանքա ալիւր պակաս ցոյց կուտայ Էլիբէկեանը:

Կօնսորլէօրը աչքի առաջ ունենալով, թէ ալիւրի փոխադրութեան ժամանակ իւրաքանչիւր վէրստի վրայ մէկ փութ ալիւրէն ինչքան կը պակասէ, տոյն պակասորդը հանելէ յետոյ, Էլիբէկեանէն կը պահանջէ 54 փ.[ութ] 21 գր.[վանքա] ալիւր: Հաշուելով ամերիկական ալիւրի փութը նուազագոյնը 500 ր.[ուրլի], կօնսորլէօրը անհրաժեշտ կը համարէ Էլիբէկեանէն պահանջել 54 փ.[ութ] 21 գր.[վանքա] ալիւր կամ անոր փոխարժէքը 54 փ.[ութ] 21 գր.[վանքա]X500=27.262 ր.[ուրլի] 50 կ.[ուպեկ]:

Որոշում. Դատական [Ատյանը] որոշեց Էլիբէկեանի վերաբերեալ փաստաթղթերը դրկել Ատեանի անդամ ընկ. Կորին Ղազարեանին, յանձնարարելով անոր, որ Էլիբէկեանի գործի քննութիւնը կատարէ մանրամասն հարցաքննելով ամբաստանուածը, անկէ ստանայ գրաւոր ցուցմունքներ, և գործի վերաբերեալ բոլոր թղթերուն հետ միասին իր անձնական (Կորինի) կարծիքն ալ Էլիբէկեանի խնդրի վերաբերեալ մեզ դրկի:

Արևելեան Բիւրօն 1919 թ. հոկտ.[եմբեր] 15 թուակիր նամակով մը ներկայացուցած էր Դատական Ատեանիս մի շարք խնդիրներ քննելու համար: Այդ խնդիրներուն առթիւ մենք գրած էինք նամակ Բիւրօին՝ պահանջելով, որ յիշեալ հարցերու վերաբերեալ ինչ փաստաթղթեր որ ունի՝ մեր տրամադրութեան տակ դնի: Բիւրօն մինչև այժմ մեր նամակին չի պատասխանած: Որոշուեցաւ այդ առթիւ բերանացի խօսել Բիւրօի ընկերներուն հետ՝ այն հաշիւով, որ Հ. Առաքելեանի և տիկին Ռաֆայելեանի սպանութեան առթիւ<sup>31</sup> ինչ տեղեկութիւններ կամ փաստաթղթեր որ ունի, մեր տրամադրութեան տակ դնի:

Անկէ առաջ ընկ. Պապայեան նամակով մը ամբաստանած էր Պօլտոյ Պատասխանատու Մարմինը, որ վերթերաններու յատկացուած գումարէն ճանապարհածախք է տրուած Պօլսէն Երևան մեկնող ընկերներուն<sup>32</sup>: Այս խնդրի քննութեան առթիւ, երբ Դատ.[ական] Ատեանս ցուցմունքներ կ'ստանար ընկ. Վրացեանէն, վերջինս յայտնած է, թէ Բիւրօն այդ մասին Պօլտոյ Պատասխանատու Մարմինն նամակ գրած է և կ'սպասի պատասխանի: Դատ.[ական] Ատեանս որոշեց հարցնել Բիւրօին, թէ ինչ պատասխան ստացած է Պօլտոյ Մարմնէն և այդ մասին ինք տուած է մի ունէ որոշում:

Նկատի ունենալով, որ Դեօյեանը այստեղ կը գտնուի, որոշուեցաւ հասկնալ իր տեղը և անմիջապէս հարցաքննութեան հրաւիրել Դատական Ատեանիս մօտ:

Դատական Ատեանի  
Նախագահ՝ Յ. Տէր-Դաւթեան [ստորագրութիւն]  
Անդամներ՝ Մ. Օզանեան [ստորագրութիւն]

39-40-41-րդ Նիստեր

5-6 Փետր.[վար] 1920

Ներկայ էին՝

Ընկերներ՝ Յովսէփ Տէր-Դաւթեան, Լևոն Թադէոսեան, Մերուժան Օզանեան:

Օրակարգ՝

Շարաֆեանի հարց:

Լուծում

Երկու օրուայ ընթացքին Դատական Ատեանս յաջորդաբար ունեցաւ երեք նիստեր, ուր Շարաֆեանի հարցի մասին երկարօրէն մտքերու փոխանակութիւն կատարելէ յետոյ ընդունուեց հետևեալ բանաձևը.

31 Այս հարցի վերաբերյալ մանրամասն տե՛ն Գերագոյն դատական ատյանի արձանագրութիւնների առաջին մասի հրապարակման մեջ:

32 Այս մասին մանրամասն տե՛ն նախորդ հրապարակումներում:

### Հ. Յ. Դ. Դատական Ատենանի որոշումը ընկ. Ալեքսանդր Շարաֆեանի մասին<sup>33</sup>

1920 թ. փետր.[վար] 5, Երևան: Հ. Յ. Դ. IX Ընդհ.[անուր] Ժողովի լիազորությամբ, կուսակցական Դատական Ատենան՝ մասնակցությամբ նախագահ Յովսէփ Տէր-Դաթեանի, անդամներ՝ Լևոն Թաղէղոսեանի և Մերուժան Օզանեանի, լսելով Վիրահայ Ազգ.[ային] Խորհուրդի վերահսկիչ բաժանմունքի վարիչ պ. Խունունցի ամբաստանագիրը, ներկայացրած նույն Խորհուրդի Գործադիր մարմնին օգոստ.[ոս] 1919 թուից, Ալեքսանդրապոլի պարենաւորման կոմիտէի նախագահ և քաղաքային վարչութեան անդամ ընկ. Ալեքսանդր Շարաֆեանի մասին, որու համաձայն՝ վերջինս թէև իր ստացած դրամներու և մթերքներու հաշիւները ներկայացուցած է Խորհուրդին, սակայն Խորհուրդի վերաստուգիչ մարմինը գտած է անընդունելի Շարաֆեանի NN 1, 2, 4, 5, 6, 8 հաշուի թղթերը՝ 181.280 ռուպլիի անընդունելի հաշիւ մը տեսնելով անոնց մէջ՝ հետևեալ պատճառաբանությամբ.

Ա. Որ N 1 փաստաթուղթը անընդունելի է, որովհետև Զարիկը մի կտոր թղթի վրայ հրահանգեր է ընկ. Շարաֆեանին, որ 15.000 ռ.[ուբլի] վճարէ շտապս կապիտան Ժամկոչեանին, առարկելով, որ թերևս այդ գումարը չէ յատկացուած պարէնաւորման կարիքներու և տրուած է ի հաշիւ Զարիկի անձնական պարտքից:

Բ. Անընդունելի է N 2 փաստաթուղթը, որով Զարիկի կարգադրությամբ 25.000 ռ.[ուբլի] վճարուած է Վանի նահանգային կոմիսար Կոստի Համբարձումեանին նահանգի կարիքներուն համար, առանց մատնանշելու թէ որպիսի կարիքներու համար,

Գ. Անընդունելի են դարձեալ N 4 փաստաթուղթը, որով Զարիկի պահանջով 1.000 փութ ալիւր և 650 փութ գալէթ<sup>34</sup> ուղարկուած է Սարիղամիշ, N 5-ը, որով Մեսրոպ եպիսկոպոսին ուղարկուած է 1.000 փութ ալիւր, N 6-ը, որով արտակարգ յանձնաժողովի կարգադրությամբ գաղթականական կոմիտէին ուղարկուած է 1.066 փ.[ութ] 30 ֆ.[ունտ] կարտոֆիլ, քանի որ այդ գնումները կատարուեր են առանց գէներալ կոմիսարիատի պարէնաւորման բաժնի հաւանության, ատկէ գատ N 4 փաստաթուղթը ցոյց չտար, թէ 1.000 փութ ալիւրը և 650 փութ գալէթը արդէօք Զարիկի պահանջով ուղարկուած է: Դարձեալ, Սարիղամիշ ուղարկուած 2.000 փ.[ութ] ալիւրը ևս անընդունելի է մինչև չպարզուի, թէ յիշեալ տեղերն ուղարկուած ալիւրներն արդէօք 850.000 ռ.[ուբլի] աւանսով գնուած ալիւրն է, թէ Թիֆլիսէն անոնց ուղարկուած 5 վակօն ալիւրն, որու մասին ինչպէս և 657 փութ հաճարի մասին ոչ մի տեղեկութիւն չկայ և պէտք է հարցնել Շարաֆեանին,

Դ. Անընդունելի է N 8 փաստաթուղթը, որով 4.250 ռ.[ուբլի] վճարուած է պանքին 850.000 ռ.[ուբլի] գումարը մի ամբողջ տարի պահելու համար, այդ գումարէն 1.770 ռ.[ուբլի] 80 կ.[ոպեկ] ընդունելի է 5 ամսուայ պահելու համար, իսկ 2.479 ռ.[ուբլի] 20 կ.[ոպեկ]՝ անընդունելի:

Դատական Ատենան լսելով նաև Ալեքսանդր Շարաֆեանի բերանացի և գրաւոր բացատրութիւնները այս մասին, պարէնաւորման նախարարութեան ներկայացուցիչներու ցուցմունքները, ինչպէս նաև աչքի առաջ ունենալով Ալեքսանդրապոլի Քաղաքային վարչութեան N 1205 փաստաթուղթը 1920 փետր.[վար] 2 թուականով, որու իսկականը ժամանակին ուղարկուած է եղեր կոմիսարիատին, որ մանրամասն կը բացատրէ NN 4, 5, 6 հաշուէթղթերու էլոյթինը, եկաւ հետևեալ եզրակացութեան.

Ա. Նկատելով, որ Ալեքսանդր Շարաֆեան՝ որպէս գէներալ կոմիսարիատի օգնական բԺ. Զարիկի տրամադրութեան ներքև գործող ընկեր, մի միայն իրեն եղած հրահանգի համաձայն վճարած է 15.000 և 25.000 ռ.[ուբլի] գումարները իրեն մատնանշուած անձերուն, որոնք իրենց ստացած ըլլալը կ'ապացուցանեն

33 Մանրամասն տես նախորդ հրապարակումներում:

34 Ֆրանսիական քաղցրավենիքի տեսակ:

իրենց տուած ստացականներով.

Բ. Նկատելով, որ Շարաֆեան ալիւր, կարտոֆիլ և գալէթ ուղարկած է Սարի-դամիշ Մեսրոպ եպիսկոպոսին և գաղթականական կօմիտէին Զարիկևի և արտակարգ յանձնաժողովի կարգադրութեան համաձայն, որ էրզրումը, Սարիդամիշը և Կարսը իյնալէ յետոյ գաղթականութիւնը թափուած է Ալէքսանդրապօլ և Ղարաքիլիսէ և խնամատարութեան նախարարի ներկայացուցիչներու համար ծախսուած է 8 վակօս ալիւր, որու 5 վակօսը եղեր է Թիֆլիսէն ստացուած հաճարը, և որու հաշիւները իր ժամանակին ուղարկուած են գէներալ կօմիսարիատին,

Գ. Նկատելով, որ Շարաֆեան պանքին վճարած է 4.250 ռ.[ուբլի], ոչ միայն 850.000 ռուպլին պանքը պահելու, այլև ստացուած չէքերը դրամի վերածելու համար, պարագայ մը, որ կը հաստատուի պանքի կողմէ ստացուած թղթի միջոցաւ, Դատական Ատեանս վճռեց.

Ա. Ճանաչել NN 1 և 2 փաստաթղթերով Շարաֆեանի կողմէ բաց թողուած գումարները ընդունելի, նկատի ունենալով, որ Շարաֆեան իրաւունք չուներ Զարիկևի կարգադրութեամբ բաց թողուելիք գումարներու գործածութեան մասին բացատրութիւններ պահանջելու,

Բ. Ի նկատի ունենալով այն ժամանակ քաղաքական և տնտեսական ծանր վիճակը, որ ստեղծուած էր էրզրումի, Սարիդամիշի և Կարսի իյնալէն յետոյ, երբ ժողովուրդը կը դիմեր խելագար և խուճապային նահանջի և գաղթականութիւնը կը կոտորուեր սովէն, համարել միանգամայն անհիմն և անտեղի վերաստուգիչի նկատած ձևական թերութիւնները NN 4, 5, 6 փաստաթղթերու մասին,

Գ. Համարել ընկ. Ալ. Շարաֆեանը իր գործունէութեան և հաշուէտուութեան մէջ միանգամայն արդար և զերծ ունէ կասկածէ:

Որոշուեցաւ ներկայ որոշմնագրի պատճէնը ուղարկել Հ. Յ. Դ. Բիւրօին՝ յանձնարարելով անոր, որ զայն հրատարակէ «Յառաջ»ի մէջ:

Դատական Ատեանի  
Նախագահ՝ Յ. Տէր-Դաւթեան [ստորագրութիւն]  
Անդամներ՝ Մ. Օզանեան [ստորագրութիւն]

41-րդ Նիստ

10 Փետր.[վար] 1920

Ներկայ էին՝

Ընկերներ՝ Յովսէփ Տէր-Դաւթեան, Լևոն Թաղէոսեան, Մերութան Օզանեան:

Օրակարգ՝

Տիգրան Դևոյեանի հարց,

Արտուշ Քոչարեանի հարց:

Լուծում

Մի շարք ընկերներ IX Ընդհ.[անուր] ժողովին ներկայացուցած էին կարգ մը ամբաստանութիւններ Տիգրան Դևոյեանի մասին: Այդ ամբաստանութիւնները հետևեալներն էին.

Ա. **Արոյեան.** 1919 նոյ.[եմբեր] 13 թուակիր նամակով մը կ'ամբաստանի Դևոյեանը իբրև գլխաւոր պատասխանատուն 1915ի յուլիսեան աղէտաւոր նահանջին: Արոյեան իր ամբաստանութիւնը կը հիմնէ հրամանատար Օզանովսկիի յայտարարութեան վրայ, որ իբրև թէ Ռուբէնին և Փափագեանին յայտներ է, որ Դևոյեան տաճկական ոյժերը չափազանց [շատ] ցոյց տուած է, որու հետևանքով նահանջի պատճառ դարձած է:

Բ. **Տիգրան Գաւաթեան.** Գրութեամբ մը, 1919 նոյ.[եմբեր] 15 թուականաւ, կը յայտնէ, թէ Դևոյեան ներկայացած է նամակով մը Դուրան Բարձրաւանդակի Կեդր.[ոնական] Կօմիտէին, իբրև Բիւրօի ներկայացուցիչ, մինչդեռ, ի վերջոյ ստացուած բերանացի տեղեկութիւնների համաձայն, Բիւրօն զայն ներկայացուցիչ չէ



նշանակեր: Հակառակ Դուրան Բարձրաւանդակի (Մանագկերտ) Կեդր.[ոնական] կօմիտէի նախագգուշացումին, որ Դևօյեան բանակի մասին տալիք տեղեկութիւնները գրէ ծածկագիր, Դևօյեան այդ զգուշացումէն յետոյ ալ երկու նամակներ գրած է առանց ծածկագրի, որոնցմէ մէկը կ'իյնայ թուրք կառավարութեան ձեռքը:

1915 թ. յունիս 23-ին, երբ ռուսական բանակի ռազմեղկան<sup>35</sup> կը հասնի Սշոյ Թիլ գիւղը, նա իր ժամանակին չի տեղեկացներ Դուրան Բարձրաւանդակի Կ.[ենտրոնական] կօմիտէին, որպէսզի հնարաւոր լինէր միանալ ռուսական բանակին, ճիշտ այդ ատեններն էր, որ տաճկական բանակը կեդրոնացուցած էր իր ոյժերը Սշոյ քաղաքի վրայ և սկսած էր կոտորածը:

Գ. **Տիգրան Աւետիսեան**. Իր նամակով կը յայտարարէ, թէ 1915 յունիս ամսին Ռոստոմի և Արամի<sup>36</sup> կարգադրութեամբ Մանագկերտի շրջանը կը դրկուին Կարօ Սասունի, Ա. Բաբայեան, Մինաս Մակարեան և Տիգրան Աւետիսեան, որոնք կը քննին Տիգրան Դևօյեանի գործունէութիւնը և կը գտնեն, որ Դևօյեանի ռազմեղկան լաւ հիմքերու վրայ չէ դրուած, որ անոր հաղորդած տեղեկութիւնները երկրի մասին թերի են, որ նա իր շրջանի հայ ժողովուրդը կ'ենթարկէ թալանի: Այս մասին վերոյիշեալ ընկերներուն բաւականաչափ տեղեկութիւններ կը հաղորդէ Ալ. Շարաֆեան, որ այդ ժամանակ այդ կողմերը կը գտնուի եղեր իր բժշկա-սանիտարական խմբով: Ընկ. Աւետիսեան կը յայտնէ, որ իրենք Դևօյեանի մեղապարտ գործունէութեան համար Իգդիրի մէջ զեկուցում տուած էին Ռոստոմի և Վրացեանին: Իրենք իրենց քննութեան ընթացքին գտած են նաև, որ Դևօյեան առանց Մանագկերտի նահանջի վտանգի մասին տեղեկութիւն տալու շրջանի պատասխանատու ընկերներուն՝ հետացած է: Դևօյեան՝ իբրև լրտես կամաւորական բանակին, բանտարկուած է Թիֆլիսի մէջ: Վրաց կառավարութիւնը զայն կը դատապարտէ մահուան, [բայց] կը փախցուի բանտէն, կը մտնէ մեր կառավարութեան ծառայութեան մէջ, շարունակելով կամավորական բանակի իր լրտեսութիւնը:

Դ. **Կարօ Սասունի**. Կամբաստանէ Դևօյեան հետևեալ յանցանքներու մէջ.

ա. Մօտ 20.000 փութ ցորեն հաւաքած է հայ գիւղացիներէն, որոնց փող չի տուած և այդ ցորենը ծախած է ռուսական բանակին:

բ. Թուրքերէ և այլ մարդոցմէ ոսկե դրամ փողեր հաւաքած է, կաշառքի և թալանի ձևով:

գ. Վտանգաւոր մէկ քանի քիւրտ ղեկավարներ ազատ անցուցած է դէպի Տաճկաստան, անոնցմէ ի փոխարեն դրամ ստանալով:

դ. Նահանջը տեղի է ունեցած Դևօյեանի սխալ կամ սուտ տուեալներուն վրայ:

ե. Ճշգրիտ տեղեկութիւններ տուած չէ Սշոյ մեր ընկերներուն:

զ. Կասկածներ կան, որ այդ նահանջը սարքած է ան՝ ծածկելու համար այդ ժամանակի իր ըրած զեղծումները:

Ե. **Մովսէս Պետրոսեան**. Կը յայտնէ, որ 1919 օգոստ.[ոս] ամսին Պօլսոյ մէջ տեսնուած է Դևօյեանի հետ և գտած է իր սենեակին մէջ պատճէնը այն հետախուզական րափօրին<sup>37</sup>, որ պիտի դրկէ եղեր Պօլսոյ Տենիքիսի ներկայացուցչին, ստորագրուած՝ քափիթան Դևօյեան: Այդ րափօրի իսկականը նա պիտի դրկեր նաև Հայաստանի կառավարութեան:

Այս ամբաստանութիւնները ներկայացուեցան ընկ. Տիգրան Դևօյեանին, որ հրաւիրուած էր այս առթիւ Դատ.[ալկան] Ատեանիս ցուցմունքներ տալու համար: Դևօյեան մանրամասն բացատրութիւններ տուաւ իրեն եղած հարցերուն վերաբերեալ ամբաստանութեանց առթիւ: Դատական Ատեանս պահանջեց սակայն, որ Դևօյեան իր ցուցմունքները տայ գրաւոր և այն հարցերու վերաբերեալ ինչ փաստաթղթեր ալ որ ունի, դնէ մեր տրամադրութեան տակ՝ մինչև իր հարցի քննութեան վերջանալը:

35 Հետախուզութիւն – ռուսերէն:

36 Նկատի ունի Արամ Մանուկյանին:

37 Զեկուցագիր:

**Արտուշ Քոչարեանի**<sup>38</sup> **հարց:** Ընկեր Արտուշ իրեն ուղղուած մեղադրական կէտերուն առթիւ տուաւ ընդարձակ ցուցմունքներ: Դատական Ատենաս սակայն պարտականութիւն դրաւ ընկերոջ վրայ, որ իր ցուցմունքները գրաւորապէս տայ մեզ: Որովհետև ընկերը Թիֆլիսի կեդրոնականի միջոցաւ իրեն ուղարկուած մեղադրական կէտեր պարունակող նամակը չէ ստացած, իր Երևան գալուն պատճառաւ, որոշուեցաւ նոյն նամակի պատճէնը տալ իրեն:

Դատական Ատենի  
Նախագահ՝ Յ. Տէր-Դաւթեան [ստորագրություն]  
Անդամներ՝ Մ. Օզանեան [ստորագրություն]

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 150, թթ. 23 հակ.-38: Բնագիր: Ձեռագիր:

---

38 Արտուշ Քոչարյանը ՀՅԴ Լոռու և Թիֆլիսի պատասխանատու գործիչներից էր, դատապարտվել էր լիժինյան հալածանքների ժամանակ: